

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

## ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

15.11.2012թ.

ք.Իջևան

### 1. ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

/Զեկ.՝ Մ.Մխիթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ Տավուշի մարզպետի 25 մայիսի թիվ 49-Ա որոշման համաձայն սահմանված կարգով ս/թ սեպտեմբերի 23-ին մարզի 54 համայնքներում կայացան ՏԻՄ ընտրություններ, ընդ որում 41 համայնքներում՝ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների, 8-ում՝ միայն համայնքի ղեկավարի և 5 -ում՝ միայն ավագանու անդամների:

Մարզում ձևավորվել էին 80 ընտրական տեղամասեր, որոնցից թիվ 40 ընտրատարածքում՝ 49 և թիվ 41-ում՝ 31: 49 համայնքներում համայնքի ղեկավարի թեկնածուներ էին գրանցվել 124 մարդ, որից կին՝ 8-ը: Օրենքով սահմանված ժամկետներում ինքնաբացարկի դիմումներ էին ներկայացրել 25-ը: Թեղուտի և Դեղձավանի գործող գյուղապետերը չէին առաջադրվել:

Մարզի 13 համայնքներում ընտրապայքարը անց է կացվել մեկական թեկնածուներով: 49 համայնքներից 16-ում ընտրվել են համայնքի նոր ղեկավարներ, իսկ 25-ում գործող համայնքների ղեկավարները վերընտրվել են:

46 համայնքներում կայացել են ավագանու անդամների ընտրություններ: Թեկնածուներ էին առաջադրվել 425 մարդ, որից թիվ 40 ընտրատարածքում՝ 307, թիվ 41-ում՝ 134: Սահմանված ժամկետներում ինքնաբացարկի դիմումներ էին ներկայացրել 16 մարդ, որից թիվ 40 ընտրատարածքում 14, թիվ 41-ում՝ 2: Ընտրությունների արդյունքում ավագանու անդամներ են ընտրվել 300-ը, որից թիվ 40-ում 215, թիվ 41-ում՝ 85: Ընտրված ավագանու անդամներից 28-ը կանայք են:

Զեկուցողը նաև նշեց, որ ընդհանուր առմամբ ՏԻՄ ընտրություններն անցել են ՀՀ Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան, առանց էական խախտումների: Վստահված անձանց և դիտորդների կողմից բողոքարկման դեպքեր չեն արձանագրվել: Թեկնածուների կողմից գրանցվել է բողոքարկման 2 դեպք Արծվաբերդում և Բաղանիսում: Համապատասխան ընտրատարածքային հանձնաժողովներում կատարված վերահաշվարկի արդյունքները էական ազդեցություն չեն ունեցել ընտրությունների նախնական արդյունքների վրա: Զեկույցի վերջում նա ներկայացրեց համայնքների նորընտիր ղեկավարներին:

Տավուշի մարզպետը շնորհավորեց համայնքների նորընտիր ղեկավարներին, և հույս հայտնեց, որ նման բարդ և պատվաբեր աշխատանքը կկատարվի պատշաճ մակարդակով:

**ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ**

<i>Հ/Հ</i>	<i>Պաշտոնը</i>	<i>Անուն, ազգանունը</i>
1	ՀՀ Տավուշի մարզպետ	Արմեն Ղուլարյան
2	Իջևանի քաղաքապետ	Վարդան Ղալումյան
3	Դիլիջանի քաղաքապետ	Արմեն Սանթրոսյան
4	Բերդի քաղաքապետ	Հարություն Մանուչարյան
5	Նոյեմբերյանի քաղաքապետ	Վանուշ Ամիրադյան
6	Այրումի քաղաքապետ	Գիգոլ Եգանյան
7	Ազատամուտի գյուղապետ	Ժորա Մարտիրոսյան
8	Ակնաղբյուրի գյուղապետ	Կարեն Դոլմազյան
9	Աղավնավանքի գյուղապետ	Վարդուշ Ներսիսյան
10	Աճարկուտի գյուղապետ	Ռաֆիկ Օհանյան
11	Այգեհովտի գյուղապետ	Լևոն Գրիգորյան
12	Աչաջրի գյուղապետ	Համո Գևորգյան
13	Բերքաբերի գյուղապետ	Արթուր Մադաթյան
14	Գանձաքարի գյուղապետ	Շահեն Շահինյան
15	Գետահովտի գյուղապետ	Արթուր Ղազարյան
16	Դիտավանի գյուղապետ	Հակոբ Սարիբեկյան
17	Ենոքավանի գյուղապետ	Անդրանիկ Զիբուխյան
18	Լուսաձորի գյուղապետ	Սուրեն Քոչարյան
19	Լուսահովտի գյուղապետ	Արայիկ Սարհատյան
20	Խաչթառակի գյուղապետ	Հայկ Քամալյան
21	Ն. Ծաղկավանի գյուղապետ	Նաիրի Աթաբեկյան
22	Կիրանցի գյուղապետ	Համայակ Նազարյան
23	Հովքի գյուղապետ	Յուրա Ծուղունյան
24	Սարիգյուղի գյուղապետ	Կոմիտաս Էլլարյան
25	Սևքարի գյուղապետ	Թաթուլ Թելոյան
26	Վազաշենի գյուղապետ	Լորիկ Բաղիրյան
27	Խաչարձանի գյուղապետ	Գագիկ Շահնազարյան
28	Հաղարձնի գյուղապետ	Սարգիս Պողոսյան
29	Թեղուտի գյուղապետ	Արարատ Թամրազյան
30	Գոշի գյուղապետ	Գևորգ Ամիրխանյան
31	Դեբեդավանի գյուղապետ	Վանյա Դամիրջյան
32	Բագրատաշենի գյուղապետ	Արկադի Մակյան
33	Դեղձավանի գյուղապետ	Յուրիկ Հովհաննեսյան
34	Պտղավանի գյուղապետ	Արայիկ Պարանյան
35	Արձիսի գյուղապետ	Սեյրան Միկիչյան
36	Լճկաձորի գյուղապետ	Սուրեն Մարտիրոսյան
37	Հաղթանակի գյուղապետ	Վահրամ Շարոյան
38	Զորականի գյուղապետ	Սուրեն Մարտիրոսյան
39	Բերդավանի գյուղապետ	Արարատ Գաբրիելյան
40	Կողբի գյուղապետ	Արամայիս Աբովյան
41	Դովեղի գյուղապետ	Սամվել Գորգինյան
42	Զուջևանի գյուղապետ	Ժորա Զիլինգարյան
43	Բաղանիսի գյուղապետ	Նարեկ Սահակյան

44	Ոսկեվանի գյուղապետ	Սերյոժա Ալեքսանյան
45	Ոսկեպարի գյուղապետ	Երվանդ Եզանյան
46	Կոթիի գյուղապետ	Ֆելիքս Մելիքյան
47	Բարեկամավանի գյուղապետ	Գարիկ Աբազյան
48	Չինչինի գյուղապետ	Կարեն Դարբինյան
49	Տավուշի գյուղապետ	Արթուր Հովհաննիսյան
50	Ն.Կ. Աղբյուրի գյուղապետ	Մանվել Կամենդատյան
51	Վ.Կ. Աղբյուրի գյուղապետ	Կամո Չոբանյան
52	Նորաշենի գյուղապետ	Գոռ Աբրահամյան
53	Մովսեսի գյուղապետ	Արարատ Ավայան
54	Չորաթանի գյուղապետ	Վարուժան Բաղմանյան
55	Արծվաբերդի գյուղապետ	Վոլոդյա Ուզունյան
56	Այգեձորի գյուղապետ	Սասուն Սաֆարյան
57	Այգեպարի գյուղապետ	Անդրանիկ Այդինյան
58	Չինարիի գյուղապետ	Մանվել Սաղոյան
59	Նավուրի գյուղապետ	Արամ Նիգոյան
60	Իծաքարի գյուղապետ	Արամ Դանիելյան
61	Վ. Ծաղկավանի գյուղապետ	Արթուր Ղազարյան
62	Վարազավանի գյուղապետ	Մանվել Մանուչարյան
63	Պառավաքարի գյուղապետ	Ռոլանդ Մարգարյան